Տ. ՄՈՎՍԵՍ ՔԱՀԱՆԱ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԳՈՏՈՒ ԳՅՈՒՏԻ ՏՈՆԻՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(27 օգոստոսի, 2023)

«Փառք Քեզ, Տե՛ր Աստված, փառք Քեզ ամեն
ինչի համար, Տե՛ր, փառք Քեզ»

Տասներկու տարի առաջ՝ հուլիս—օգոստոս ամիսներին, եկել էի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ օրհնություն ստանալու։ Բայց փոխարենը ճեմարանում ուսանելու անակնկալ *առաջարկ ստացա։*

Իմ հետագա կյանքը, ուսանելու վայրը, ոլորտը, որ բացարձակապես Եկեղեցու հետ կապ չունեին, վաղուց արդեն որոշված էին։ Եւ այդ պահին, երբ առաջարկն ստացա, գիտակցում էի, որ եթե համաձայնեմ, կյանքս պետք է 180o-ով փոխվի։ Պիտի կանգնեմ մի ճանապարհի վրա, որին բացարձակապես ծանոթ չեմ, բայց եւ այնպես, առանց երկար մտածելու, համաձայնեցի՝ հավատք ունենալով, որ այսպես առավելաբար պիտի մոտենամ Աստծուն։ Եւ իսկապես, ոչ իմ արժանիքի, այլ Աստծու ողորմությամբ, հավատում եմ, մոտեցել եմ Աստծուն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջոցով։

Այո՛, Մայր Աթոռն է ինձ սովորեցրել, թե ինչպես կարող եմ մոտենալ Աստծուն. ծառայի՛ր Աստծուն՝ մարդկանց ծառայելու միջոցով, սիրի՛ր Աստծուն՝ սիրելով մարդկանց։ Ահա դասը, որ տասներկու տարի շարունակ ստացել եմ հնարավոր լավագույն ուսուցչից՝ Մայր Աթոռից։

Սիրելինե՛ր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն Աստծու զորությամբ հարուստ տաճարն է ու դրանից տարածվող օրհնությունը։ Բայց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը նաեւ Հիսուս Քրիստոսով միավորված հոգեւոր եղբայրությունն է՝ Հովվապետի գլխավորությամբ։

Այս ընկալումն ունենալով՝ ես եւ օծակից եղբայրներս մեր երախտագիտությունն ու որդիական խոնարհումն ենք հայտնում ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողի-

կոսին, որի անմիջական հսկողության եւ խնամքի ներքո են անցել մեր այդ տարիները, որի առաջնորդությամբ եւ անձնական օրինակով է, որ մենք կրթվել ենք։

Մեր հատուկ շնորհակալությունն ենք հայտնում Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպս. Բաբայանին, որն ամեն ջանք ներդրել է մեր այս 40-օրյա պահեցողության եւ պատրաստման ընթացքը լավագույնս կազմակերպելու համար։

Մեր շնորհակալություն ենք հայտնում Մայր Աթոռի ողջ միաբանությանը՝ եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից եւ սարկավագաց դասերին, եւ յուրաքանչյուր անհատի, որ խոսքով կամ գործով յուրովի նպաստել է մեր՝ իբրեւ հոգեւորական կայացմանը։

Մեր մասնավոր շնորհակալությունն ենք հայտնում նաեւ մեր հոգեւոր ծնող՝ Գերաշնորհ Տ. Վահան եպս. Հովհաննիսյանին, որ մեծ սիրով ու պատրաստակամությամբ ստանձնեց մեր օծման պատասխանատվությունը եւ այդ պահից սկսյալ ցայսօր, ըստ ամենայնի, մեր կողքին է՝ իբրեւ խորհրդատու եւ առաջնորդ։

Շնորհակալ ենք։

Օրհնյալ Տեր մեր Հիսուս Քրիստոս. ամեն

«Ընդէ՞ր այդպէս վատասիրտ էք,
չեւ եւս ունիք հաւատս»
(Մարկ. Դ. 40)։

Սիրելինե՛ր, այսօրվա տոնն ու ավետարանական ընթերցումը՝ երկուսն էլ, այն մասին են, որ հավատքը հրաշագործ է, երբ չի խանգարում վախը։

Մարկոս ավետարանիչն այսօր մեզ պատմում է, թե ինչպես են Քրիստոս ու Իր աշակերտները երեկոյան Գալիլեական ծովի մի ափից նավարկում մյուսը։ Այդ ընթացքում, երբ Քրիստոս ննջում էր նավի հետնամասում, մեծ փոթորիկ է բարձրանում, նավը լցվում է ջրով։ Աշակերտները վախենում են եւ մտածելով, թե պիտի ջրասույզ լինեն, արթնացնում են Քրիստոսին ու վրդովված հարցնում նրան. «Արդյո՞ք քեզ համար միեւնույնն է, որ մենք կործանվում ենք»։ Վերջինս ընդամենը «դադարի՛ր, լռի՛ր» հրահանգով կանգնեցնում է հողմը՝ խաղաղություն հաստատելով ջրերի վրա, եւ ապա հարցնում է Իր աշակերտներին. «Ինչո՞ւ եք այդքան

վախկոտ. դեռ չունե՞ք հավատք»։ Փոթորիկը հանդարտվում է, ալիքները խաղաղվում են, սակայն աշակերտները փոխանակ հանդարտվելու եւ խաղաղվելու՝ սկսում են ավելի շատ վախենալ։

Աշակերտները սարսափում են փոթորկից, ապա գիտակցում են իրենց անզորությունը, բայց սեփական թուլությամբ մտահոգվելու եւ ելքի ուղիներ փնտրելու փոխարեն մեղադրում են Քրիստոսին անտարբերության մեջ։

Մյուս կողմից՝ Քրիստոս նախ սաստում է հողմը եւ ապա բացատրում Իր աշակերտներին, որ իրենց վախն ու տագնապը, նաեւ անզորությունը հետեւանք են հավատքի բացակայության։

Իրականում այդ վախը, վրդովմունքն ու անհավատությունը բնական էին՝ մարդկային, քանի որ նրանք դեռ ամբողջությամբ չէին ընկալում Քրիստոսի հանգամանքն ու Նրա ինքնությունը։ Նրանց հավատքի բացակայությունը եւ վախը հետեւանք են նրանց անգիտության, ինչը, սիրելինե՛րս, հիմնարար ընկալում է ավետարանական այս պատմության մեջ։

Սուրբ Գիրքը մեզ ցույց է տալիս, որ երբ նրանք ավելի ամբողջական պատկերացում են կազմում Քրիստոսի մասին, հավատում են Նրա աստվածությանն ու զորությանը, իրենք են սկսում հրաշքներ գործել «Հիսուս Քրիստոսի անունով»՝ հավատալով Քրիստոսին եւ այդ հավատքի դիմաց արժանանալով Տիրոջ զորությանը։ Ինչպես Սբ. Պետրոսն է ասում ի ծնե կաղին. «Յանուն Նազովրեցի Յիսուս Քրիստոսի վե՛ր կաց եւ քայլի՛ր» (Գործք Գ. 6)։ Ընդ որում՝ հրաշքներ էին գործում ոչ միայն անձամբ առաքյալները, այլեւ իրենց պատկանող իրերը, ինչպես որ Սբ. Պողոսի պարագայում Սուրբ Գիրքն ասում է, թե «մինչեւ իսկ նրա թաշկինակներն ու վարշամակներն էին տանում հիվանդների մոտ, եւ ախտերը հեռանում էին այդ հիվանդներից, իսկ չար ոգիները՝ դուրս գալիս նրանցից» (հմմտ. Գործք ԺԸ. 12)։

Նույնը վերաբերում Սբ. Աստվածածնի գոտուն։ Ե. դարասկզբին այդ գոտին գտնում են Երուսաղեմում։ Գոտու միջոցով կատարվում են շատ հրաշագործություններ՝ բժշկվում են բազմաթիվ հիվանդներ։

Այսպիսով՝ Քրիստոսին հավատացողները հրաշքներ են գործում։

Նավակի մեջ գտնվող աշակերտների *անհավատությունն ու վախը եւ այդ նույն աշակերտներից արդեն* սուրբ առաքյալ *դարձածների հավատքն ու հրաշագործությունները մեզ գալիս են բացատրելու մի պարզ իրողություն։ Հավատքը պատճառ է հաղթանակի։ Մինչդեռ եթե մենք*

որեւէ բանից վախենում ենք, ուրեմն հավատք չունենք, չենք վստահում ու չենք ճանաչում նրան, որը մեր առաջնորդն ու հովանավորն է, եւ սա հանգեցնում է մեզ մեր անզորության գիտակցմանն ու պարտությանը։ Ուրեմն՝ անհավատությունից բխող վախն է պատճառը մեր թուլության ու պարտությունների։

Այսօր մենք եւս այդ նույն փորձության առջեւ ենք, ինչ ժամանակին Հիսուսի աշակերտները։ Մենք նույնպես մի մեծ նավի մեջ ենք, որն ալեկոծվում է անասելի փոթորիկներից։ Եւ բոլորս գիտենք, թե խոսքը ինչ փոթորիկների մասին է՝ սկսած անձնականից եւ վերջացրած համազգայինով։ Անհանդուրժողականություն, դավաճանություն, շահամոլություն, ցեղասպանություն եւ այդ ամենի դիմաց՝ խոր անտարբերություն։

Հարց եմ ուզում տալ։ Հայտնվելով այդ փոթորիկների հանդիման, գիտակցելով մեր անզորությունը՝ մենք այժմ ինչ պետք է անենք։ Պատվենք առ Աստված, որ մեզ հետ այդ նույն նավի մեջ է եւ հարցնենք, թե «ուր ես, միթե չես տեսնում, որ կործանվում ենք, միթե մենք քեզ համար միեւնույնն ենք»։ Թե՞ հավատանք, որ այս նավը չի կարող խորտակվել, քանզի նավի մեջ է Քրիստոս։

Այս նավը չի կարող խորտակվել, քանզի այս նավի մեջ է Քրիստոս։

Սիրելինե՛ր, Քրիստոս ասում է. «Ամեն ինչ հնարավոր է նրա համար, ով հավատում է» (Մարկ. Թ. 22), իսկ հավատալ նշանակում է փոխվել դեպի բարին, սիրել մտերիմներին եւ առհասարակ մարդկանց, կատարելագործվել, զորանալ, առաջադիմել, ապրել քրիստոնեավայել՝ առանց ամոթի, առանց թուլության ու առանց վախի, արժանի լինել քրիստոնյա անվանը։

Հավատալ նշանակում է լսել Աստծուն եւ պահել Նրա պատվիրանները։

Խելացի մի մարդ ասել է. կատարյալ մարդը ոչ թե քրիստոնյան է, այլ նա, ով ձգտում է կատարելության։ Մենք չենք կարող մի վայրկյանում փոխվել եւ կատարյալ դառնալ, վախկոտից վերածվել հերոսի։ Բայց այդ փոփոխությունը հնարավոր է, եթե միայն հավատանք եւ դրան համարժեք գործենք։

Սա ի մտի ունենալով՝ խնդրում եմ Քեզ, Տե՛ր, օգնի՛ր ինձ՝ թերահավատիս։

Ես նույնպես իմ վախերն ունեմ, եւ երբ որոշ անցանկալի մտքեր այցելում են ինձ, երբեմն անգամ տագնապում եմ։ Բայց ամեն անգամ, երբ վախը պատում է ինձ, Աստված կարծես հուշում է. «Ինչո՞ւ ես այդքան

վախկոտ. դեռ չունեմ հավատք։ Ինչից ես վախենում, միթե ես քեզ հետ չեմ։ Քեզ հետ եմ։ Ուրեմն գնա՛ եւ արա՛ այն, ինչ պատվիրել եմ քեզ՝ առանց վախենալու։ Իբրեւ ծնող, ընկեր, զավակ, հայ եւ քրիստոնյա՝ գնա եւ արա այն, ինչ ես քեզ վստահել եմ»։

Սիրելինե՛ր, եկե՛ք այսօր տուն վերադառնանք իբրեւ հավատքի նորոգման անվերջ ճանապարհի ուղեւորներ։ Աստծու հետ միավորված, մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունը ճաշակելով, Աստծուն եւ Նրա զորությունը մեր մեջ ունենալով՝ գնանք եւ հետեւողական աշխատանքով հանդարտեցնենք մեր փոթորիկները եւ չթողնենք, որ դրանք վախեցնեն կամ հուսահատեցնեն մեզ։ Փոխարենը՝ խաղաղություն հաստատենք մեր շուրջը, որով նաեւ պատճառ կդառնանք Աստծու խաղաղության տարածման։

Աստծու սերը, զորությունն ու խաղաղությունը թող ամենքիս հետ լինեն, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն։